№ 98 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՑԻՍԻ 8 **1901** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՑԻՍԻ 8 № 98

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվան 6 րուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ ամն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ. Տելեֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եւրոպական պօստը Թիւրքիայում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Անբերրիութիւնից վնասվածների օգտին. Նամակ Շուշուց. Նամակ Նոր-Նախիջեւանից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կողովի պատճառով։

ԵՒՐՕՊԱԿԱՆ ՊՕՍՏԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

Թիւրքիան ստիպեց իր մասին խօսել եւրոպական քաղաքական շրջաններում։ Թիւրքաց կառավարութիւնը հանդէս բերեց պօստային անունով մի հարց, որով շօշափեց եւրոպական մեծ պետութիւնների շահերը եւ առաջ բերեց մեծ դժգոհութիւն դիպլօմատիական աշխարհում։

Ինչպէս յայտնի է, եւրոպական մեծ պետութիւնները՝ Ռուսաստանը, Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան եւ Աւստրիան պահում են Թիւրքիայում իրանց սեփական պօստատները, որոնց միջոցով եւ կատարում են իրանց բոլոր նամակագրութիւնը, ստանում են եւ ուղարկում ծրարներ ու լրագիրներ եւ անում են բոլոր այն գործառնութիւնները, որոնք վերապահված են պօստային վարչութեան։

Անկասկած՝ այդ դրութիւնը անբնական է։ Իւրաքանչիւր պետութիւն ինքն է պահում պօստը եւ օտար պետութիւնները իրանց բոլոր պօստային գործողութիւնները կատարում են տեղական պօստի միջոցով։ Թիւրքիան էլ զգում է այդ բանը եւ այժմ մտադիր է փոխել ներկայ կարգերը, իր ձեռքը վերցնել ամբողջ պօստը եւ բոլորովին ոչնչացնել եւրոպական մասնաւոր պօստերը։

Սակայն պետութիւնները ոչ միայն չեն համաձայնվում Թիւրքիայի դիտաւորութիւնների հետ, այլ եւ ամենառանդունի կերպով բողոքեցին օսմանեան կառավարութեան քայլերին, որ արվեցին այդ ուղղութեամբ։

Պէտք է ուշադրութեան առնել այն հանգամանքը, որ եւրոպական պետութիւնները արդէն շատ դէպքերում եւ շատ տարիներ փորձել են Թիւրքական պօստի հրապոյրները։ Երբ եւրոպական պօստատները դեռ ներկայ իրանց կանոնաւոր կազմակերպութիւնը չէին ստացել եւ եւրոպացիները ստիպված էին դիմել Թիւրքական պօստին, տեղի էին ունենում անընդհատ Թիւրիմացութիւնները—կամ նամակներ եւ ծրարները չէին ստացվում, կամ նրանք ուշանում էին, կամ ենթարկվում էին անտանելի խուզարկութիւնների եւ քննութիւնների։ Եւրոպական պետութիւնները վաղուց զղվել էին օսմանեան պօստի անկարգ վիճակից, ուստի քանի-քանի հինգ տարի սրանից առաջ հաստատեցին իրանց պօստը եւ կանոնաւորեցին Եւրոպայի եւ Թիւրքիայի մէջ յարաբերութիւնները։

Թիւրքիան, անշուշտ, իրաւունք ունի յետ ստանալու իր պօստը եւ օգտվելու նրա տուած թէ եկամուտներից եւ թէ ուրիշ բարեմասնութիւններից։ Սակայն նա պէտք է ապացուցանէ, որ արժանի է այդ իրաւունքը յետ ստանալու եւ կարելի է վստահութեամբ նրան թողնել այդ կարեւոր գործը, որը ոչ միայն ներքին պետական, այլ եւ միջազգային նշանակութիւն ունի։

Թիւրքական պօստը մինչեւ այժմ չէ կարողացել ձեռք բերել այդ վստահութիւնը եւ ամեն մարդ, որ Թիւրքիայի հետ գործ ունի, աշխատում է կարելիին չափ խուսափել Թիւրքական պօստից եւ օգտվում է եւրոպական պօստով իր յարաբերութիւնների համար։ Ե՞րբ կը գայ Թիւրքիայի համար այն ժամը, որ Եւրոպան կարող կը լինի յանձնել նրան այն, ինչ որ ամեն մի բարեկարգ պետութեան մէջ սեփական կառավարութեան ձեռքին է—չը գիտենք. բայց Թիւրքիայի ներկան դեռ գրաւական չէ ներկայացնում մօտիկ ապագայի համար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Ֆէմինիստների համար մի շատ անախորժ փաստ.—արբեցողութիւնը աստիճան տարածված է եւ գեղեցիկ սեռի մէջ։ Բանը այնտեղին է հասել, որ Անգլիայում, ինչպէս ասում են, կազմվել է մի ընկերութիւն՝ ամուսիններին ալկօհօլամոլ կանանցից պաշտպանելու համար։ Բայց ինչո՞ւ միայն անգլիուհի արբեցողների վրա զարմանալ, հարցնում է «Новости» լրագրի աշխատակիցը։ Ամեն երկրում, հետեւաբար եւ Ռուսաստանում, նկատվում է նոյն իրողութիւնը։ Մինչեւ այժմ ընդունված էր կարծել թէ խմում են միայն աղքատ կանայք։ Բայց ալկօհօլամոլութիւնը նոյն չափով տարածված է եւ տարածվում է նաեւ ապահով, նոյն իսկ շատ ապահով շրջաններում։

Եթէ չէ խմում մուժիկի կամ արհեստաւորի կինը, պատճառն այն է, որ ամուսինը չէ տալիս նրան փող։ Հէնց որ կինը դուրս է գալիս անկախութեան ճանապարհ, հէնց որ սկսում է գրօշ վաստակելու աստիճանին հասնել, իսկոյն սկսում է խմել եւ շատ աստիճ խմել։ Արդարացրէք պոռնիկ կնոջը նրանով՝ թէ նրանց արհեստը տարօրինակ է, արդարացրէք լուացարար կնոջը նրանով, թէ նա խմում է՝ չը մրսելու համար։ Իսկ գործարանների կանայքն ու աղջիկները. իսկ մեր աղախինները։ Մթէ դարձեալ աչխատանքի պայմանները, միջավայրը, շրջապատող հանգամանքները։ Լաւ, այդ դէպքում վերցրէք մեր վաճառականական դասակարգը, որ դեռ ժամիկ անցեալում եօթը կողպէքների ետեւում փակված էր եւ ոչ օքի աչքին չէր երեւում։ Այժմ այնտեղ նոյնքան տարածված է խերեան ու քաղցր արաղը, ինչպէս հին ժամանակներում մեղրը։ Արդեօք անգործունէութիւնից է դա առաջանում, չատ կշտացած լինելուց է, թէ ինչ,—փաստը մնում է փաստ։

Մտնում են միջին, կրթված դասակարգի կանայք։ Այդտեղ հօ միայն արաղն ու սպիրտը չեն թունաւորում մարդկանց, այլ եւ մօրֆին, եթերը եւ հազար ու մի ուրիշ բաներ։ Շատ անհրապոյր դրութիւն, ինչպէս տեսնում էք։ Բայց ֆէմինիստները կարող են հանգիստ լինել. յոդուածագիրը չատպում է վերջացնել իր տխուր նկարագրութիւնները նրանով, որ հաւատացնում է, թէ կանանց արբեցողութեան պատճառը տղամարդն է... Խեղճ տղամարդ...

ԱՆԲԵՐՐԻՈՒԹԻՒՆԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք հետեւեալ նոր նուիրատուութիւնները.

Աղդաչից—Ա. Սարգսեանից 5 րուբլի։

Meran-ից (Աւստրիա) Մ. Բ.-ից 3 րուբ. 60 կոպ. (հինգ գուլդէն)։

Նոր-Նախիջեւանից—Յակոբ քահ. Նահաչեանից 1 րուբլի։

Ատրպատականից — Սեդրակ Սարգսեանից 6 ր. 50 կոպ.։ Նուիրել են. Ս. Սարգսեանց 5 րուբլի, Գ. Պօղոսեան 1 րուբլի, Դադաչեանց 50 կոպ.։

Ղըզըլ-Արվատից—Ս. Հայրապետեանից 30 րուբ. 6 կոպ.։ Հաւաքված է ճրագալոյց երեկոյին։

Գանձակից—Բանանց գիւղի հայ հասարակութիւնից 19 րուբլի, որ ժողովել են Ղազար Բադալեանց եւ Եփրեմ Մոնթուեանց։

Ախալքալաքից—Հայ-լուսաւորչական կանանց Բարեգործական ընկերութիւնից 50 րուբլի։

Զանգեզուրի Ղաթարի պղնձահանքից 56 րուբլի, որ հանգանակված է Մէլիք-Ազարեանցի պղնձահանքի ծառայողներից։

Ընդամենը 171 րուբ. 16 կ. յանձնել ենք 4000 րուբլի, մինչեւ այժմ ստացել ենք 4403 րուբլի 2 կոպէկ. մեզ մօտ մնում է 403 րուբլի 2 կոպ.։

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒԻՑ

Ապրիլի 28-ին

Նոր քաղաքագլխի ընտրութիւնը մի ամսով յետաձգեցին, որովհետեւ աչքի առաջ ունեցած թեկնածուից դեռ վերջնականապէս համաձայնութիւն չէին ստացել։ Ջայնաւոր պ. Իչխանեանց, ամսի 20-ի ժողովում, յանձն առաւ քաղաքագլխացուին համոզել, նրա հասարակական զգացմունքը գրգռելով։ Պ. Իչխանեանց յայտնի է մեր քաղաքում ոչ իբրեւ «հրաչալի» փաստաբան, այլ եւ մանաւանդ հասարակական ասպարէզների համար ղեկավարներ գտնելու մէջ։ Նրա չնորհիւն է, որ այսօր մենք ունենք Բէնևիկի պէս տեսուչ եւ աշակերտների մտքերը բթացնող ուսուցչական խումբ։ Բայց մինչեւ որ Իչխանեանցը իր «գարեր փափկացնող» լեզուով կաշխատի համոզել վախկոտ քաղաքագլխացուին, միւս իրաւասուները զբաղված են մի հետաքրքրական հարցով. արդեօք առանց կօկարդի եւ առանց փայլուն դեղին կոճակների մարդը կարող է քաղաքագլուխ լինել, թէ ոչ։

Ահա այս վայրենի հարցն է իրաւասուների գլխաւոր խօսակցութեան առարկան. նրանք ամբողջ օրերով «Թօփխանի» քարերի վրա նստած մտածում են այդ հարցի մասին։ Երբէք միայն հարցի վճիռը յայտարարեցին կլուբում, թէ չէ կարող սեւ սիւրտուկաւորը քաղաքագլուխ լինել։ Չէ կարող, եթէ նա լինի մինչեւ անգամ փորձված, խելօք, անտես մարդ։ Չէ կարող, եթէ նա նոյն իսկ սէր զգայ դէպի հասարակական գործը եւ քաւականանայ քիչ ռոճկով։

Հարցի լուծումն յայտնվելուց յետոյ՝ քաղաքագլխի թեկնածուների թիւը չատանում է։ Բանը այնտեղ է հասել, որ նոյն իսկ Սաֆարալիբէկովի պէս մարդն էլ չէ քաշվում իր քուէատուփը դնելուց։ Բայց Թուրք ձայնաւորները ամեն մի կօկարդաւորի չեն հաւանում. նրանք առաջարկում են Բօսաօղլէկովին ընտրել քաղաքագլուխ. Թուրքերի ասելով, դա յայտնի վարչական մարդ է, տարիների ընթացքում եղել է գաւառապետի օգնական, կառավարել է ամբողջ մի գաւառ. բացի այդ, որ գլխաւորն է, նա միւս Թուրքերի պէս նեղ հոգի չունի, նրա համար մի եւ նոյն են թէ հայ, թէ Թուրք, թէ ռուս։ Հայ ձայնաւորները չեն կարողանում հաւատալ, որ 70-ական թւականի Թուրք բէկը առանց ազգային խտրութեան կարողանայ մի որ եւ է հարց լուծել։ Հայերը այժմ այդպէս են խօսում, բայց ո՞վ կարող է

---

*) Ալկիօ, ֆիննական լայնի վիպասան, պատկանում է գիւղացի-գրողների շրջապտին։ Սրանց մասին տես «Մուրճ» 1901 թ. № 2։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՈՂՈՎԻ ՊԱՏՃԱՌՈՎ

Պատմուածք Ալկիօ-ի *)

Կողովը, որ սահնակի վրա դրած ծառայեցնում են էժանագին իրեր կրելու համար, հազուարեա միշտ ընդհանրութեան է պատկանում։ Եթէ մէկն իր համար մի այդպիսի կողով է չինում, բոլոր հարեւաններն առանց քաշվելու օգտվում են նրանից։

Էլլու Կարտունէնն ունէր մի կողով, որ առաւօրեայ ընկած էր լինում ամբարի մօտ, արեւ ու անձրեւի տակ, ուստի բաւական փչացած էր։ Մի օր այդ կողովը փոխ վերցրին այրի Պակարայնէնի որդիքը, որոնց հարկաւոր էր ինչ-որ բան տանել քաղաք։ Սրանք անկարգ ու անճշդապահ մարդիկ էին, եւ քաղաքից վերադառնալուց յետոյ Կարտունէնի կողովը յետ չը դարձրին, այլ ձգեցին իրանց տան եռեւը։

Այստեղ այդ կողովը մի անգամ տեսաւ Էլենաս Տուպուն, որը վերցրել էր ապակեայ գործարանին մօխիր ժամակարարելու կապալը, եւ մօխիր ածելու տեղ չունէր։ Նա թոյլատուութիւն խնդրեց օգտվել կողովից, եւ ի դէպ՝ խոստացաւ յետ դարձնելու ուղղակի էլլու Կարտունէնին։ Այդ ժամանակ պարզվեց, որ կողովը տան եռեւ ընկած է եղել մի տարուց աւել, որի համար պառաւ մայրը լաւ խրատեց իր որդկերանց։ Սակայն տղերքը կարողացան արդարանալ ինչպէս հարկն է, այն էլ ասած, որ կարտունէնն իսկի մի անգամ էլ չէր յիշեցրել իր կողովի մասին, որին, ակներեւ, կարօտուԹիւն չէր զգացել։ Վերջապէս, եթէ ծեր Տուպուն խօսք է տալիս կողովը վերադարձնելու աիրոջը, այս դէպքում արժէ մի քիչ երկար խօսել։

Տուպուն մօխիրը կրում էր ամբողջ ձմեռը, իսկ գարնանը հիւանդացաւ եւ մեռաւ։ Որտեղից կարող էր իմանալ այրիացած պառաւ Տուպուն, Թէ ուժից էր ձեռք բերել իր հանգուցեալ ամուսինը հնացած, կիսափտած կողովը, որ ընկած էր լինում գոմի մօտ։ Պառաւը միայն մի անգամ օգտվեց այդ իրից, այսինքն երբ մօխրի մնացորդը գործարան տարաւ, որ դրամը ստանայ եւ իր ամուսնուն Թաղէ։

Տուպուն պարտքեր էր Թողել. պարտատէրերը պահանջում էին, որ նրա բոլոր չարժական եւ անչարժ կարողութիւնն աճուրդով ծախվի։ Դրա դէմ չէր կարելի հակաճառել, ուստի մի քանի չաբաթից յետոյ աճուրդը կայացաւ։ Ի միջի այլոց ծախվեց եւ հնացած կողովը, որը ընկաւ քսան պէննիով (8 կոպ.) փալաս հաւաքող Մէակուննէնին. սա գնեց եւ տան եղած բոլոր հին չորերը։

—Շատ ետ եկածն է այդ Մէակուննէնը,—սրախօսում էին գիւղացիները.—նա կողովը գրնեց եւ որպէս զի դատարկ տուն չը տանի, մի բեռ էլ ապրանք է առնում։

—Մի այդպիսի կողով Կարտունէնն էլ ունէր,—նկատեց աղաներից մէկը։

—Հաւանական է, Տուպուն Կարտունէնից է գնել կողովը, երբ մօխրի կապալը վերցրել էր,—չարունակեց միւսը։

Այլ եւս կողովի մասին խօսող չեղաւ։

Մէակուննէնը կոկկատեց կողովը, սահնակի վրա սարքեց եւ սկսեց իր ծախու ապրանքը նրանով կրել։ Մի անգամ, չրջագայելով գիւղերը՝ հին չորեր գնելու համար, նա մտաւ Կարտունէնի մօտ։

—Ա՛յ քեզ խաբար,—բացականչեց էլլուն, երբ դուրս եկաւ բակը եւ տեսաւ փալաս ծախողի սահնակը,—ախր դա իմ սեփական կողովն է, Մէակուննէն։ Որտեղից ես վերցրել։

—Ի՞նչ։ Քոնն է։ Լաւն այն է, որ բերանդ մաքուր պահես եւ չը ստախօսես, եղբայր։ Եթէ ուզում ես իմանալ, ես այդ կողովը գնել եմ աճուրդին Էլենաս Տուպուից յետոյ եւ վճարել եմ քսան պէննի կանխիկ փողով։

—Կարելի է... Ծամենայն դէպս կողովն իմն է, եւ իմ սեփականութիւնը հէնց այստեղ քեզնից յետ կը վերցնեմ։ Կեանքումս երբէք այդ կողովը Տուպուին չեմ ծախել... Աստուած վկայ, յետ կը վերցնեմ։

—Դու ուզում ես կողովն ինձնից խլել,—քրքջաց Մէակուննէնը։—Մի տեսնենք ինչ քաջ տղայ ես, որ կարողանաս անել։

—Իմ սեփականութիւնը միշտ կարող եմ վերցնել, ուր որ էլ նրան տեսնեմ,—պնդեց Կարտունէնը։—Ահա երեք տարի է, որ այդ իմ իրը կորել է։ Իսկ այժմ նա իր տեղից չի չարժվի։ Այո՛։ Հաւաքիր փալաս-մալասդ եւ լաւ է քո կամքով վերադարձնես կողովս։

—Հը՛մ։ Ես այդ ապրանքին հալալ փող եմ տուել, կարող եմ երդվել Աւետարանի վրա... Երբէք ձեռքից բաց չեմ թողնի կողովը, եթէ նոյն իսկ դու... կարող ես փողդ պահանջել այրի Տուպուից։

հաւատալ նրանց. վարչութեան անդամի ընտրութիւնը թուրքերը չը տարան: Ուրեմն չատ հասկանալի է, որ նրանք իրանց առաջարկած թեկնածուին առաջ կը տանեն:

Նորընտիր վարչութեան անդամը դեռ մինչեւ այժմ չը հաստատվեց իր պաշտօնում: Նրա հաստատման ուշանալու պատճառը զանազան կերպ են բացատրում այստեղ: Ձայնաւորները այժմ են հասկացել, որ նախ քան որ եւ մէկին հասարակական գործիչ ընտրելը, պէտք է լաւ ծանօթ լինել նրա անցեալի հետ:

Թեմական դպրոցի տեսչի եւ հոգաբարձու Իշխանեանցի բացումից վերադառնալուց յետոյ ուսուցիչները հանգստացել են, որովհետեւ, ինչպէս ասում են, նրանք կարողացել են բացումից փող բերել. ուսուցիչների ռոճիկը ամսավայ ամիսների սկզբից պիտի բաժանեն:

R.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

Նոր-Նախիջեւան, ապրիլի 22-ին

Բազուի հայ դրամատիկական խմբի ներկայացումները վերջացան եւ խումբը տասը ներկայացում տալուց յետոյ մեկնեց Եկատերինոդար, Աբժաիր եւ ապա ամառային սեզոնին մնալու է հանքային ջրերում, ուր եւ չարունակելու է իր գործունէութիւնը: Մեր ժողովուրդը, ինչպէս անցեալ տարի, չատ խօսեց, չատ օգնելու՝ թէ պէտք է ունենալ Նախիջեւանում հայոց դրամատիկական խումբ, որ հայերէն ներկայացումները հարկաւոր է պահանջ դարձնել: Բայց, հաւատացած ենք, կը գայ աշունը, կը սկսվի սեզոնը եւ հայերէն ներկայացումների հարցը նորից մոռացութեան կը տրվի: Թէ անցեալ տարվայ եւ թէ մանաւանդ այս տարվայ հայերէն ներկայացումների ունեցած աջողութիւնը մեզ համոզել է տալիս, որ Նախիջեւանի եւ Րոստովի հայ հասարակութիւնը ամենայն հեշտութեամբ գոնէ մի փոքրիկ խումբ կարող է պահել:

Այս տարի, սկզբներում, ներկայացումները մոտքի կողմից անաջող էին—կային պատճառներ—բայց չորրորդ ներկայացումից յետոյ հասարակութիւնը չատ սիրով էր յաճախում եւ գլխաւորապէս միջին եւ հասարակ դասակարգը: Թատրոն էին գալիս այնպիսի մարդիկ, որոնք սովորական ժամանակ թատրոնի երես չէին տեսնում. երեւում էր, որ ժողովրդի մեծաւոր մասը սիրում է իր մայրենի լեզուով ներկայացումները եւ մինչեւ իսկ պահանջ ունի լսելու իր մայրենի լեզուն բեմից:

Ձմեռվայ սեզոնին կարելի է հրաւիրել 5—6 հոգուց բաղկացած մի փոքրիկ դերասանական խումբ եւ, տեղական սիրողների աջակցութեամբ, գոնէ չաբաթական մի ներկայացում տալ ու դրանով մեծ բարոյական մխիթարութիւն պատճառել մեր այն դասակարդին, որը զուրկ է ամեն մի խելացի եւ օգտաւէտ զուարճութիւնից եւ բաւականութիւնից:

Այս տարի դրամատիկական ընկերութիւնը փորձեր էր անում էժանացած գներով հայերէն ներկայացումներ տալու ժողովրդի համար, բայց փորձը փորձ էլ մնաց եւ մենք չը տեսանք գոնէ մի ներկայացում, որ տրված լինէր հասարակ դասակարդի համար: Եզան ասողներ, չամաչեցին, թէ թատրոնը մատչելի անելով, մենք հասարակ ժողովրդով կը լցնենք թատրոնը, բայց նա աիտոռ կը դառնայ:

Այսպէս, գոնէ եկող սեզոնին դերասանական ընկերութիւնը լուրջ մտածէ հայերէն ներկայացումների հարցի մասին եւ թող առանց տատանվելու ձեռնարկէ միւս տարվանից հայոց դրամատիկական խումբ կազմակերպելուն, որով ընկերութիւնը թէ նիւթապէս եւ թէ բարոյապէս առաւել կը չահվի:

Յակովը Գենջեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սամարկանդ, ապրիլի 2-ին

Խնդրեմ մի անկիւնում տեղ տալ հետեւեալ տողերիս. «Մշակ» լրագրի էջերում, համար 233 անցեալ տարվայ, տպված էր մի լուր, թէ թեմական պարոն լրատուն զեղչում է իրօք իրողութիւնը, ասում է թէ իբր ես տուի իմ հրաժարականը առաջնորդի խիստ հրամանի պահանջով եւ թէ հաշուետեսները աղօթատան անկանօն պահված հաշիւները ընտանեբար կանոնաւորեցին, որ հետեւանքն եղաւ, որ աղօթատունն ունի ընդամենն 36 րուբլի, պ. Թղթակիցը իզուր է աշխատում պնդել վերագրել թէ իմ երէցփոխանութիւնից հրաժարվելս եւ թէ անկանօն հաշիւներն կանոնաւորելու զանազան տեղի չունեցած պատճառների, ահա բանն ինչումն է, ես երէցփոխի պաշտօնն թողացի ոչ թէ խիստ հրամանի պահանջով առաջնորդի, այլ այն պատճառով, որ դիպլոմաւոր քահանան չը կարողացաւ գնահատել իր հոգի փարաջան իր անտեղի գործակատարութեամբ, իսկ ինչ վերաբերում է անկանօն պահած հաշիւներն կանոնաւորելուն դա միանգամայն զրպարտութիւն է, ահա թէ ինչպէս, իմ ընտրված օրն, որ է 25-ն ապրիլի 1899 թուին ստացած Գորք քահանայ Զաքարենցից 364 րուբլի 76 կոպ., Նուիրատուներից ժողոված են հաւաձանի առարագրութեանց 635 րուբլի, մոմավաճառութիւնից 879 րուբլի 10 կոպ. ընդամենն 1878 րուբլի 86 կոպ. այդ գումարից ծախսված է երկու տարվայ աղօթատան վարձն 900 րուբլի մոմ է գնված 300 րուբլի, ածուցուի, ծառայի աղօթատան եւ զանազան ծախքերի 768 րուբլի 89 կոպ. ընդամենն 1968 րուբլի 89 կոպ. ուրեմն ծախքն հանելով մուտքից եկեղեցին կունենայ դրամագլուխ ոչ թէ 36 րուբլի, որ իմ ոխերիմ թշնամու կ. Հախումենցի միայն հանճարն է, այլ պարտք 90 րուբլի 10 կ.:

Նախկին երէցփոխ՝

Միքայէլ Ս. Ղուկասեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սօչի, ապրիլի 1-ին

Քաղաքիս ուղարկված եր ու տպված Վ. Մինասեանի ստորագրութեամբ ներկայ տարվայ «Մշակ» լրագրի № 41-ում իմ դէմ մի անվայել եւ անպատկառ նամակ, որով չօշափվում էր իմ անձնական ու քահանայական պատիւս, որի համար ես արդէն դատաստանի եմ դիմած: Ես իմ կեանքում թուղթ չեմ խաղացել եւ ոչ ձեռքս առել. ես եթէ օրպէս հիւրասիրութեամբ հաց եմ կերել եւ երկու բաժակ գինի խմել, դա դեռ չէ նշանակում, որ ես հարբեցող եմ եղել: Իմ մեղքս այն է, որ ես թէեւ խեղճ գաղթական հայ քահանայ եմ, սակայն ձեր աղայութեան ու կամակորութեանը չեմ ծառայում:

Ս. քահ. Տէր-Աստուածատրեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիրակի, մայիսի 6-ին, Թագաւոր Կայսրի ծննդեան տօնի առիթով, տեղի ունեցան մաղթանքներ ուղղափառների Ալէքսանդրօ-Նեվսկի զինուորական տաճարում, հայ-լուսաւորչականների, կաթոլիկների, բողոքականների եկեղեցիներում, մահմեդականների մզկիթում եւ հրէաների սինագոգաններում: Երեկոյեան քաղաքը լուսավառված էր:

—

Մեզ հաղորդում են, որ պ. Գ. Զմշկեանը ուղարկել է իչխանուհի Մարիամ Թումանեանին հայոց բեմի օգտին 143 ր. 30 կ. այն գումարից, որ մնացել է «Պէպօի» յօբելեանի ներկայացումից:

—

Ինչպէս հաղորդում է «Новости» լրագիրը, Պետերբուրգի հասալսարանում քննութիւն են բռնում աւելի քան 1,300 ուսանողներ, իսկ մնացածները խնդիր են տուել յետաձգելու քննութիւնները մինչեւ աշունը: Բացի այդ 1,300 հոգուց, պետական մասնաժողովի առաջ քննութիւն են տալիս այժմ 600 ուսանողներ: Քննութիւնները համալսարանում կատարվում են խումբ-խումբ: Իւրաքանչիւր ուսանող, որին թոյլ է տուած քննութիւն բռնել, ստանում է առանձին տոմսակ համալսարան մտնելու իրաւունք ունենալու համար:

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը դիմել է ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին եւ դպրոցական հաստատութիւնների ղեկավարներին մի շրջաբերականով, որով առաջարկում է մի շարք հարցեր այն բարեփոխութիւնների վերաբերմամբ, որոնք պէտք է տեղի ունենան բարձրագոյն դպրոցներում: Մինիստրութիւնը խնդրում է հոգաբարձուներին կարծիք յայտնել պրօֆէսսորական մարմնի կազմակերպութեան, պարապմունքների տեսական եւ գործնական կարգաւորման եւ ունկնդիրների կազմակերպութեան մասին: Մի քանի ֆակուլտէտներ, դեռ եւս շրջաբերականը չը ստացած, սկսել են մշակել այն հիմնական սկզբունքների մանրամասնութիւնները, որոնք, ըստ երեւոյթին, պէտք է կազմեն ապագայ բարեփոխութիւնների հիմքը: Այդ սկզբունքները հետեւեալներն են.—ակադեմիական ինքնուրոյնութիւն, պրօֆէսսորական կազմը ընդունել որպէս կօրպօրատիվ մարմին, սերտ յարաբերութիւններ պրօֆէսսորների եւ ուսանողների մէջ, թոյլատրութիւն որոշ սահմաններում այնպիսի ուսանողական կազմակերպութիւնների, որոնց նպատակն է բարեգործութիւն (փոխադարձ օգնութեան դրամարկղներ), բարոյակրթութիւն (ուսանողական դատարաններ) եւ ուսանողական կարիքների պարզումն: Միջնակարգ դպրոցների բարեփոխութեան դեռ եւս ձեռնամուխ չէ եղած, բայց նախագծեր եւ նիւթեր ստացվում են Ռուսաստանի բոլոր ծայրերից:

—

Քիչ ժամանակ առաջ Պետերբուրգի եւ Մոսկվայի խոշոր դրամատէրերից կազմված մի ընկերութիւն գնեց մի ահագին կալուածք Կրիմի հարաւային ափում, Բալակլավայի մօտ: Այդ կալուածքի մէջ ժամադրութիւն կայ հիմնել մի ընդարձակ առողջապահական կայարան: Ձեռնարկութեան գլուխ կանգնած են բժիշկ պրօֆէսսորներ: Մտադրութիւն կայ կայարանը բանալ առաջիկայ սեզոնի սկզբում:

—

Պօլտավայում,—ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները,—մտադրութիւն կայ բանալ մի նոր տիպի ուսումնարան ուսուցիչներ եւ ուսուցչուհիներ պատրաստելու համար: Պօլտավայի զէմստվոն կամենում է բանալ այդ ուսումնարանը միամեայ կուրսերի ձեւով այն անձանց համար, որոնք ստացել են առնւազը պրօգիմնազիական կրթութիւն: Զէմստվոն ապահով է այդ կուրսերի ծախքերը եւ միջնորդում է հաստատել նրա կանոնադրութիւնը:

—

ԿԱՂՋՈՒԱՆԻՑ մեզ գրում են. «Անցած աշնան մեր գաւառում մորեխի մի քանի խմբեր երեւացին, բայց ոչ մի վնաս չը տուեցին, սակայն ներկայ գարնան սկզբներում անհամար ձագեր լոյս հանեցին: Ամեն օր դիւղերից մարդիկ են գալիս տեղիս գաւառապետի մօտ եւ մորեխի մասին տեղեկութիւններ են հաղորդում, թէ ինչպէս նրանք օրից օր աճում են եւ սոսկալի վտանգ սպառնում: Երբեմն՝ ջարդված մորեխների մի ամբողջ կոյտ ներկայացնելով կառավարութեան՝ վտանգի առաջն առնելու միջոցներ են խնդրում ձեռք առնել: Դեռ ոչ մի կարգադրութիւն չէր եղել այդ մասին, երբ վրա հասաւ բնութեան օգնութիւնը—ծիծառը, կամ ինչպէս ասում են, ս. Յակոբայ թռչունը: Դրանք սովորաբար եկել էին տեղիս անոյշ թթիերից օրաւոլը, բայց թուրը դեռ հասունացած չը լինելով՝ սկսեցին մորեխ օրաւալ ու երասխի ջրում լողանալ: Ծոյս կայ, որ կարճ միջոցում բոլորովին կը ջնջեն մարեխին:

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Երրորդ տարին է, որ փակված է Ալէքսանդրօպօլի Բարեգործական ընկերութեան բաց տրած կար ու ձեւի ուսումնարանը: Այդ օրվանից բաւական թուով աղջիկներ մեզանում մնացին կիսատ սովորած կար ու ձեւը: Օր. Երանուհի Տէր-Միրաքեանց՝ ստանալով Թիֆլիսի Հայասիաց Բարեգործական ընկերութեան կար ու ձեւի ուսումնարանը, այժմ մեր քաղաքում, նահանգապետի թոյլտուութեամբ, բաց է արել կար ու ձեւի ուսումնարան, ուր մեր աղջիկները կիսատը կը լրացնեն օրիորդի մօտ եւ վերջապէս մերոնք էլ ժամանակին կը կարողանան իրանց ձեռքով կարել իրանց հագուստները: Ի սրտէ ցանկանք յարգելի օրիորդին աջողութիւն: Որքան լսել ենք, յարգելի օրիորդը հասարակ դասակարդի աղջիկների համար դիտմամբ նշանակել է ամենի թեթեւ վարձատրութիւն, որպէս զի միջոց չունեցող ծնողների աղջիկները չը դժուարանան ժամել իր ուսումնարանը, որոնց աւելի կարեւոր է սովորել կար ու ձեւը: Օրիորդ Տէր-Միրաքեանց իր հաւատարութեամբ եւ արհեստի հմտութեամբ գրաւել է դէպի իր դպրոցը հայ եւ ռուս հարուստ դասակարդի կանանց մեծ մասը:

—

ԱՐՄԱԻԻՐԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 21-ին տեղիս ակսրանոցում տեղի ունեցաւ մեր եկեղեցիների խմբապետ պ. Սիմէօն Շահնազարեանի համերգը: Երկտես խումբը բաղկացած էր մօտ 40 հոգուց: Երգեցին թէ աղգային եւ թէ ժողովրդական երգեր: Սօլօ երգողներից լաւ էին օր. Զաքարեանը եւ օր. Արաքսեանը. երկուսն էլ արժանացան բուռն ծափահարութեան: Խմբին դաշնակցում էր դաշնամուրով օր. Սարգսեանը, որը մի քանի անգամ սօլօ էլ նուագեց, եւ որին մասնաւորվեց ծաղկեայ փունջ: Համերգը սպասածից չատ աջող անցաւ եւ ժողովուրդը ցրվեց գոհ սրտով: Վերջը եղան պարեր: Աւելորդ չենք համարում յիշել, որ

—Ի՞նչ գործ ունես այրի Տուպուի հետ: Եթէ դու մի բան ունես նրա հետ, կարող ես ինքդ դիմել: Ես յետ կը վերցնեմ իմ կողովը, էլ ուրիշ ոչինչ,—ասաց Էլլուն եւ իսկապէս փորձեց կողովը պոկել սահնակից: Բայց Մէտկունէնը նրան խանգարեց:

—Ջէ, աղնիւ բարեկամ,—ծաղրեց նա,—իմ կողով խլողը դեռ մօր արգանդից չէ դուրս եկել. իսկ դու գնա քո մօր կաթը կէր. կողովը չես ստանայ: Այդպէս էլ դավթարումդ գրիր:

Այս խօսքերից յետոյ նա դէն հրեց Կարտունէնին, ցատկեց սահնակի վրա եւ ձին քշեց, չվացնելով ու հահոտալով:

Կարտունէնը տեղը սառած մնաց. բարկացկոտ հայեացքով նա ուղեկցում էր փալաս ծախողի սահնակը:

—Ահա ինչպէս վարվեց նա ինձ հետ իմ սեփական բակում, չը նայած, որ ես արդար եմ, այդ նա լաւ է հասկանում—մտածում էր Կարտունէնը:—Բանից դուրս է գալիս, որ Մէտկունէնն իսկական սրիկայ է, եւ չէ ամաչում սեփականացնել ուրիշի իրերը...

Ամբողջ երեկոն Կարտունէնի քէֆը վատ էր, եւ ամեն մի խօսքի հետ սառնայի անունն էր տալիս: Ամբողջ երեկոն աշխատում էր նա ժտաբերել, ուամ վերջին անգամ փոխ տուած կը լինէր կողովը: Բայց ոչ նա եւ ոչ նրանց տներից ոչ ոք չէին կարողանում յիշել այդ, որովհետեւ համարեա բոլոր հարեւանները զանազան ժամանակ վերցրել էին կողովը. Կարտունէնը չը ծուլացաւ մի քանի օրից յետոյ մանել պառաւ Տուպուի մօտ, բայց սա էլ ոչինչ չը պարզեց: Նրան յայտնի էր միայն, որ կողովը վաղուց ընկած է եղել իրանց բակում, ուրեմն եւ կարծում էր, թէ իրանցն է. իսկ աճուրդին կարգադրում էին պարտատէրերը, որոնք եւ ստացան բոլոր փողերը: Նա ոչնչով չէր մանակցում, եւ կողովի համար պատասխանատու չէ:

Տուն վերադառնալով, Կարտունէն այդ անաջողութիւնը դառնութեամբ պատմեց իր բանուորին:

—Դուք պէտք է պինդ բռնէիք ձեր ապրանքից եւ ուժով յետ վերցնէիք կողովը Մէտկունէնից,—ասաց բանուորը:

—Հը՛մ... Աւելնք դա հարկաւոր չէր,—երկմտեց Կարտունէնը.—բայց դատի կանչել վիրաւորողին—այդ իմ իրաւունքն է: Թող իմանայ, որ ինձ հետ...

Նա չը վերջացրեց այդ սպառնալից խօսքը; Մէտկունէնի, կաթոլիկների, բողոքականների եկեղեցիներում, մահմեդականների մզկիթում եւ հրէաների սինագոգաններում: Երեկոյեան քաղաքը լուսավառված էր:

—

Մեզ հաղորդում են, որ պ. Գ. Զմշկեանը ուղարկել է իչխանուհի Մարիամ Թումանեանին հայոց բեմի օգտին 143 ր. 30 կ. այն գումարից, որ մնացել է «Պէպօի» յօբելեանի ներկայացումից:

—

Ինչպէս հաղորդում է «Новости» լրագիրը, Պետերբուրգի հասալսարանում քննութիւն են բռնում աւելի քան 1,300 ուսանողներ, իսկ մնացածները խնդիր են տուել յետաձգելու քննութիւնները մինչեւ աշունը: Բացի այդ 1,300 հոգուց, պետական մասնաժողովի առաջ քննութիւն են տալիս այժմ 600 ուսանողներ: Քննութիւնները համալսարանում կատարվում են խումբ-խումբ: Իւրաքանչիւր ուսանող, որին թոյլ է տուած քննութիւն բռնել, ստանում է առանձին տոմսակ համալսարան մտնելու իրաւունք ունենալու համար:

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը դիմել է ուսումնարանական շրջանների հոգաբարձուներին եւ դպրոցական հաստատութիւնների ղեկավարներին մի շրջաբերականով, որով առաջարկում է մի շարք հարցեր այն բարեփոխութիւնների վերաբերմամբ, որոնք պէտք է տեղի ունենան բարձրագոյն դպրոցներում: Մինիստրութիւնը խնդրում է հոգաբարձուներին կարծիք յայտնել պրօֆէսսորական մարմնի կազմակերպութեան, պարապմունքների տեսական եւ գործնական կարգաւորման եւ ունկնդիրների կազմակերպութեան մասին: Մի քանի ֆակուլտէտներ, դեռ եւս շրջաբերականը չը ստացած, սկսել են մշակել այն հիմնական սկզբունքների մանրամասնութիւնները, որոնք, ըստ երեւոյթին, պէտք է կազմեն ապագայ բարեփոխութիւնների հիմքը: Այդ սկզբունքները հետեւեալներն են.—ակադեմիական ինքնուրոյնութիւն, պրօֆէսսորական կազմը ընդունել որպէս կօրպօրատիվ մարմին, սերտ յարաբերութիւններ պրօֆէսսորների եւ ուսանողների մէջ, թոյլատրութիւն որոշ սահմաններում այնպիսի ուսանողական կազմակերպութիւնների, որոնց նպատակն է բարեգործութիւն (փոխադարձ օգնութեան դրամարկղներ), բարոյակրթութիւն (ուսանողական դատարաններ) եւ ուսանողական կարիքների պարզումն: Միջնակարգ դպրոցների բարեփոխութեան դեռ եւս ձեռնամուխ չէ եղած, բայց նախագծեր եւ նիւթեր ստացվում են Ռուսաստանի բոլոր ծայրերից:

—

Քիչ ժամանակ առաջ Պետերբուրգի եւ Մոսկվայի խոշոր դրամատէրերից կազմված մի ընկերութիւն գնեց մի ահագին կալուածք Կրիմի հարաւային ափում, Բալակլավայի մօտ: Այդ կալուածքի մէջ ժամադրութիւն կայ հիմնել մի ընդարձակ առողջապահական կայարան: Ձեռնարկութեան գլուխ կանգնած են բժիշկ պրօֆէսսորներ: Մտադրութիւն կայ կայարանը բանալ առաջիկայ սեզոնի սկզբում:

—

Պօլտավայում,—ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները,—մտադրութիւն կայ բանալ մի նոր տիպի ուսումնարան ուսուցիչներ եւ ուսուցչուհիներ պատրաստելու համար: Պօլտավայի զէմստվոն կամենում է բանալ այդ ուսումնարանը միամեայ կուրսերի ձեւով այն անձանց համար, որոնք ստացել են առնւազը պրօգիմնազիական կրթութիւն: Զէմստվոն ապահով է այդ կուրսերի ծախքերը եւ միջնորդում է հաստատել նրա կանոնադրութիւնը:

—

ԿԱՂՋՈՒԱՆԻՑ մեզ գրում են. «Անցած աշնան մեր գաւառում մորեխի մի քանի խմբեր երեւացին, բայց ոչ մի վնաս չը տուեցին, սակայն ներկայ գարնան սկզբներում անհամար ձագեր լոյս հանեցին: Ամեն օր դիւղերից մարդիկ են գալիս տեղիս գաւառապետի մօտ եւ մորեխի մասին տեղեկութիւններ են հաղորդում, թէ ինչպէս նրանք օրից օր աճում են եւ սոսկալի վտանգ սպառնում: Երբեմն՝ ջարդված մորեխների մի ամբողջ կոյտ ներկայացնելով կառավարութեան՝ վտանգի առաջն առնելու միջոցներ են խնդրում ձեռք առնել: Դեռ ոչ մի կարգադրութիւն չէր եղել այդ մասին, երբ վրա հասաւ բնութեան օգնութիւնը—ծիծառը, կամ ինչպէս ասում են, ս. Յակոբայ թռչունը: Դրանք սովորաբար եկել էին տեղիս անոյշ թթիերից օրաւոլը, բայց թուրը դեռ հասունացած չը լինելով՝ սկսեցին մորեխ օրաւալ ու երասխի ջրում լողանալ: Ծոյս կայ, որ կարճ միջոցում բոլորովին կը ջնջեն մարեխին:

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Երրորդ տարին է, որ փակված է Ալէքսանդրօպօլի Բարեգործական ընկերութեան բաց տրած կար ու ձեւի ուսումնարանը: Այդ օրվանից բաւական թուով աղջիկներ մեզանում մնացին կիսատ սովորած կար ու ձեւը: Օր. Երանուհի Տէր-Միրաքեանց՝ ստանալով Թիֆլիսի Հայասիաց Բարեգործական ընկերութեան կար ու ձեւի ուսումնարանը, այժմ մեր քաղաքում, նահանգապետի թոյլտուութեամբ, բաց է արել կար ու ձեւի ուսումնարան, ուր մեր աղջիկները կիսատը կը լրացնեն օրիորդի մօտ եւ վերջապէս մերոնք էլ ժամանակին կը կարողանան իրանց ձեռքով կարել իրանց հագուստները: Ի սրտէ ցանկանք յարգելի օրիորդին աջողութիւն: Որքան լսել ենք, յարգելի օրիորդը հասարակ դասակարդի աղջիկների համար դիտմամբ նշանակել է ամենի թեթեւ վարձատրութիւն, որպէս զի միջոց չունեցող ծնողների աղջիկները չը դժուարանան ժամել իր ուսումնարանը, որոնց աւելի կարեւոր է սովորել կար ու ձեւը: Օրիորդ Տէր-Միրաքեանց իր հաւատարութեամբ եւ արհեստի հմտութեամբ գրաւել է դէպի իր դպրոցը հայ եւ ռուս հարուստ դասակարդի կանանց մեծ մասը:

—

ԱՐՄԱԻԻՐԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 21-ին տեղիս ակսրանոցում տեղի ունեցաւ մեր եկեղեցիների խմբապետ պ. Սիմէօն Շահնազարեանի համերգը: Երկտես խումբը բաղկացած էր մօտ 40 հոգուց: Երգեցին թէ աղգային եւ թէ ժողովրդական երգեր: Սօլօ երգողներից լաւ էին օր. Զաքարեանը եւ օր. Արաքսեանը. երկուսն էլ արժանացան բուռն ծափահարութեան: Խմբին դաշնակցում էր դաշնամուրով օր. Սարգսեանը, որը մի քանի անգամ սօլօ էլ նուագեց, եւ որին մասնաւորվեց ծաղկեայ փունջ: Համերգը սպասածից չատ աջող անցաւ եւ ժողովուրդը ցրվեց գոհ սրտով: Վերջը եղան պարեր: Աւելորդ չենք համարում յիշել, որ

դատաստանական ծախսերը կընկնեն նրա վրա...

—Ջէ, լսիր, յիմարութիւններ ես անում: Ամենայն դէպս թող ինձ գրողը տանէ, եթէ ես օգնեմ քեզ այդ աննշան գործում:

Էլլուն վիրաւորվեց եւ հեռացաւ դառնութեամբ:

«Մարդու նոզկանքը գալիս է, երբ տեսնում ես, թէ ինչպէս սատանան հպարտացրել է այդ Մէլօնէնին,—մտածում էր նա:—Հանաք բան չէ, որովհետեւ գողութիւն է կատարված: Միթէ նա ծանօթ չէ Մէտկունէնի հետ եւ նրա կողմն է պահում»:

Նա սիրտ առաւ յիշելով, որ վերջին ժողովում երկրորդ պատգամաւոր էր ընտրված Ադամ Նէաուլան: Սա հիանալի գիւղացի—մարդ է, այդ հպարտի ընկերը չէ, եւ յամենայն դէպս դեռ փչացած չէ: Նրան կարելի է հաւատացնութեամբ դիմել: Իսկ այդ Մէլօնէնը... ինչ իրաւունքով նա չընդունեց իմ օրինական գանգատը: Արժէ նրան էլ դատի քաշ տալ... գողութիւնը մի քիչ կը պակասէր, եթէ նրան դատապարտէին ինքնիչխանութեան համար:

(Ը շարունակվի)

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

— Ամերիկեան նոր հրատարակութիւններ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

— Ինչպէ՞ս կրնայ ազգը ազատիլ ալքոհոլի չարիքէն։

ՆԱՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

— Ամերիկայի մէջ հայ ուսանողներու թիւը։

ՀԱՅ ԳՐՈՂՆ

չուտով կը վերադառնայ հայրենիք, այդ բանը պակաս կախում չունէր այն վատահոգիութենից, որ Ռուսաց Կայսրը ցոյց տուեց եւ ցոյց է տալիս կոմս Վալդերզէէին»։ Յանկուզիւն յայտնելով, որ Չինաստանում կնքված զէնքի եղբայրակցութիւնը բոլոր քաղաքակիրթ ազգերի միջեւ խաղաղութեան մեծ գործին օգուտ բերէր, կայսրը վերջացրեց ճառը «hoch» կոչելով ի պատիւ Նիկոլայ Կայսրի։

7 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մայիսի 6-ին, Թագաւոր Կայսրի ծննդեան օրը, Պետերբուրգը զարդարվեց զրօշակներով։ Բոլոր եկեղեցիներում, զօրամասերում, ուսումնարաններում եւ արքունական հիմնարկութիւններում տեղի ունեցան հանդիսաւոր ժողքանքներ։ Իսակիէվսկիյ տաճարում պատարագ մատուցեց միտրոպոլիտ Անտոնի։ Երեկոյեան չքեղ լուսավառութիւն էր սարքված։—Մայիսի 6-ին ցարսկօ-Սելօ ժամանեց յունաց Թագուհին յունական Սրիատօֆոր արքայորդու հետ։—Մայիսի 6-ին, Թագաւոր Կայսրի ծննդեան օրը, ցարսկօ-Սելօի Մեծ պալատի եկեղեցում հանդիսաւոր մաղթանք կատարվեց, որին ներկայ էին Թագաւոր Կայսրը, Թագուհի-Կայսրուհիներ Մարիա Ֆեօդորօվնա եւ Ալէքսանդրա Ֆեօդորօվնա, յունաց Թագուհի Օլգա Կոնստանտինօվնա, Նորին Բարձրութիւն Թագաժառանգը եւ բոլոր Մեծ Իշխանները եւ Իշխանուհիները։ Մաղթանքը վերջանալուց յետոյ Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆեօդորօվնա, յունաց Թագուհին եւ Մեծ Իշխանուհի Մարիա Գէօրգիեվնա ցարսկօ-Սելօի Մեծ պալատից ճանապարհ ընկան։ Ապա տեղի ունեցաւ նախաճաշ, որ պատրաստված էր կլոր սեղանների վրա տասը հոգու համար։

ՐՕՍՏՕՎ ԴՕՆԻ ՎՐԱ։ Րոստովի բիւդժետում գոյացել է 210,000 րուբլու պակասորդ։ Նախահաշիւը կարգի բերելու համար ծախսերը կրճատվում են։

ՄՕՍԿՎԱ։ Բժիշկ Շատունօվսկու գործի մի մասը լսվում է փակ դռներով։ Բացարձակ քննվեց նրա վարժունքը Պենիեվսկայայի հետ, որ խնդրել էր թոյն տալ իրան ինքնաթունաւորման համար։ Շատունօվսկին, անվնաս դեղ տալով Պենիեվսկայային, խաբէութեամբ կորզեց նրանից այն բոլոր տոկոսաբեր թղթերը, որ նա վերցրել էր իր հետ (2000 րուբլի արժողութեամբ), հաւատացնելով նրան, որ նրան, իբրեւ մեռնելու պատրաստվող անձնաւորութեան, փող այլ եւս պէտք չէ։ Գործը չարուն ակվում է։

ՄՕՍԿՎԱ։ Բժիշկ Շատունօվսկիյ դատապարտվեց բանտարկութեան մէկ ու կէս տարով։

Կ. ՊՕԼԻՍ։ Իլդիզ-Կիօսկում ծովապետ Կրիգէրի պատուին ճաշկերոյթ տեղի ունեցաւ, որին ներկայ էին ռուսաց դեսպանութեան անդամները եւ մի քանի օսմանեան բարձրաստիճան պաշտօնեաներ։

ԼՕՆԴՕՆ։ «Times»-ի թղթակիցը գրում է Տօկիոյից. «Լի-Խունդ-Զանգը յոյս ունի աշնան, երբ արքունիքը վերադարձած կը լինի Պէկին, վերականգնել անկեղծ յարաբերութիւնները Ռուսաստանի հետ, առանց որոնց աւելի քան երբ եւ իցէ չէ կարող Չինաստանը պահպանել իր ապահովութիւնը եւ իր արքայական հարստութիւնը»։

ՍԲԲԱՑԻԱ։ Ցունաց Թագաւորը առաւօտեան ուղեւորվեց «Պարա» նաւով։

ՊԱՐԻԶ։ Ռուսաց Կայսրի ծննդեան օրվայ առիթով ռուսաց դեսպանութեան եկեղեցում կատարվեց հանդիսաւոր ժամասացութիւն, որին ներկայ էին դեսպան իշխան Ուրուսով, հանրապետութեան նախագահի զինուորական կաբինետի պետ գեներալ Դիւբռւա եւ արտաքին գործերի զինուորական ու ծովային ներկայացուցիչները։

ՎԻԵՆՆԱ։ Թագաւոր Կայսրի ծննդեան օրվայ առիթով, ռուսաց եկեղեցում հանդիսաւոր ժամասացութիւն կատարվեց։

ԲԵՐԼԻՆ։ Թագաւոր Կայսրի ծննդեան օրվայ առիթով ռուսաց դեսպանատան մէջ հանդիսաւոր մաղթանք կատարվեց, որից յետոյ տեղի ունեցաւ հանդիսաւոր ճաշ։

ՀԱԱԳԱ։ 1899 թ-ի խաղաղութեան կոնֆէրէնցիայի բացման յիշատակին երէկ տեղի ունեցաւ ընդհանուր զինաթափութեան եւ խաղաղութեան կանանց լիգայի ժողովը։ Մինիստրները, նոյնպէս եւ խաղաղութեան կոնֆէրէնցիայի այստեղի պատուիրակները ներկայ էին ժողովին։ Մինիստր դէ-Բօֆօր բացեց նիստը եւ մատնացոյց արեց ժողովի նշանակութեան եւ միջնորդ դատարանի հիմնարկութեան վրա. մի քանի հռետորներ խօսում էին ի նպաստ խաղաղութեան ազգերի մէջ։ Ռուսաց կայսրին եւ Վիլհելմինա թագուհուն հեռագիրներ են ուղարկված յարգանքի զգացմունքների արտայայտութեամբ։

ՊԷԿԻՆ։ Պիչօն ճանապարհ ընկաւ այստեղից, հրաժեշտ տալով կայսրանում դիպլոմատներին, գեներալ Վալդերզէէին, գեներալներին, օտար ազգի օֆիցէրներին, պրինց Ցինին եւ Լի-Խունդչանգին։ Պէկինի եւ Շանհայի միջեւ հաղորդակութիւնը ապահովված է։

ԲԵԼԳՐԱԴ։ Մինիստրական կազմի հրաժարականի մասին տարածված լուրերը անհիմն են։

ՍՏԱՆԴԷՐՏՕՆ։ Անսէրֆօրտի եւ Էրմէլոյի միջեւ բօէրները երեք անգամ յարձակում գործեցին գեներալ Բէլլօկի վրա։ Ներանց ուղեկցած չորս թնդանօթները խլելու բոլոր փորձերը ցուր անցան։ Բօէրները յետոյ հեռացան դէպի Կարօլինա։ Բօաս ժայիսի 2-ին իր բերդապահ գնդի հետ հեռացաւ Էրմէլոյից։ Բէլլօկ դրանից յետոյ քշեց Էրմէլոյի բնակիչներին, բայց հէնց որ անգլիական զօրքերը հեռացան, բօէրները նորից յայտնվեցին քաղաքում։ Գեներալ Էլիօտ չաբաթվայ ընթացքում Ստանդէրտօն ուղարկեց բազմաթիւ բօէրական ընտանիքներ, 4,000 գլուխ ձի ու տաւար։

ԽՄԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

ՍԱՄԱՐԿԱՆԴ, Միքայէլ Դովհաննեան։ Եթէ դուք այդքան մտածում էք ձեր հերքումը տպագրելու մասին, պէտք է այն փողերը, որ մխում էիք ապարդիւն հեռագիրների վրա, տալիք մի հայերէն իմացողի և խնդրէիք, որ մի կարդին, հասկանալի նամակ գրէր ձեր կողմից։ Մենք մի անգամ յայտնել էինք ձեզ, որ պատասխանը պէտք է գրել կարդին, իսկ դուք այնպէս էք կարծել, թէ խմբագրութիւնը պարտաւոր է ուղղել և շտկել ձեր գրութեան հայերէնը» և թէ մանաւանդ պատրաստ է այդ աւիթով անվերջ հեռագրական բանակցութիւններ վարել ձեզ հետ։ Եւ որպէս զի հասկանաք, թէ որքան սխալվում էք, մենք ներկայ համարում տպագրում ենք ձեր նամակը անփոփոխ, հանելով միայն երկու տող։

ԿԻՒՆ, Նուսէ. Մենք վերջ դրինք այդ բանակաին. անյարմար ժամանակ է։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՓԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

ԱՄԵՆ ՕՐ, ԲԱՑԻ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԻՑ։

ԸՆԴՈՒՆԵՑՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվաճի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կ. Ի. Գզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բարաճատեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Գ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆՆԵՐԸ

Ն. Ն. Ռոստոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), և վեներ. հ.
Գ. Ա. Թարխանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ. ծաղիկ է կտրում նոյնպէս և կիբակի, առաւօտեան ժամի 9—10.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Օ. Ց. Առվանիթակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժիշկ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԲԺՇԿԱՊԵՏ
ԳԷՈՐԳ ԹԱԴԷՈՍԵԱՆ
այս տարի եւս կընդունի հիւանդներ կովկասեան հանքային ջրերում։
Իսէնտուկի, տուն Բէզպալօվի։
(ե. հ. չ.) 4—6

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատուութեամբ։ Մեծ արկղիկը 5 րուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ
ժպտերը բուսցնելու և տարացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց
ԶՈՒԻ ԿԱԹԸ
երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուները, տալիս է կարմրին քնքշութիւն և սպիտակութիւն։ Այդ դեղերը չափազանց են. մեծ արկղիկը, արկղիկի մէջ, 2 րուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Սրուանեան հրապարակում, Միքայէլեան փողոց և Բազարում. նաև Մէքայէլեան կամուրջի վրա, Պապովի և Աբրիամօվի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։
6—100

Комиссія по устройству павильона печатнаго дѣла на предстоящей Кавказской выставкѣ сельскаго хозяйства и промышленности приглашаетъ лицъ, желающихъ выставить экспонаты въ означенномъ павильонѣ, заявить о томъ заблаговременно, а именно до 20-го будущаго мая, съ обозначеніемъ потребнаго подъ экспонаты пространства въ квадратныхъ аршинахъ. Цѣна за квадратный аршинъ въ павильонѣ—отъ 5 до 10 рублей (въ центральномъ залѣ). При заявленіи прилагается задатокъ въ размѣрѣ 3 руб. за квадратный аршинъ. Экспонентами въ павильонѣ могутъ быть кавказскіе: а) періодическія изданія, в) книжные магазины, книгоиздатели, с) типографіи, литографіи, фотографіи и прочія заведенія, имѣющія связь съ печатнымъ дѣломъ.

Заявленія присылаются въ Тифлисъ на имя секретаря комиссіи И. М. Долуханова (Гановская ул., д. № 17.). Личные переговоры съ секретаремъ ежедневно отъ 5 до 6 ч. вечера, за исключеніемъ праздничныхъ дней. Телефонъ № 678. Въ повильонѣ печатнаго дѣла отведено мѣсто подъ безплатную читальню и бюро для занятій гг. представителей прессы.
3—3

ՆՈՐ ԲԱՑՎԱԾ
„ԳՈՒՏՏԷՆԲԷՐԳ“
ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
վաճառվում են ամեն տեսակ գրքեր, պատկերներ, ալբօմներ, տետրներ եւ այլ տեսակ հրատարակութիւններ։ Վենետիկում, Վիէննայում, Կ. Պօլսում եւ Զմիւռնիայում տպված գրքերից ցանկացողներին կարող ենք ուղարկել։ Գումարով գնողներին զիջում կը լինի։
ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՐՔԵՐ։
Գրավաճառանոցի հետ գործ ունեցողները պէտք է դիմեն՝—Тифлисъ, Книжный магазинъ Гуттенбергъ, Галусту Галустяну. 6—10

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
Լ Է
ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԵՐ ԿԵԱՆՔԸ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ
Հատոր առաջին։—XVI—XVII դար
ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲԼԻ 50 ԿՈՊԵԿ
Ծախվում է Թիֆլիսում, «Մշակի» խմբագրատունը.
Օտարաքաղաքացիները դիմում են. Тифлисъ, редакція «Мшакъ». 1—10

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.
կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻԱ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ.
եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, ժամելով Տրապիզոն, Սամսօն եւ Գօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 9/22 մայիսի չոգենաւ՝ ՄԻՆԳՐԷԼԻ, կապիտան ՎԵՐՆ։ Եւ այսպէս չարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին կէսօրից յետոյ։
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան առժամակներ տրվում են ամէնօրեայ պակաս գներով։
Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անավէրպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։
Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջաիարովսկի եւ Մայսուրաձէի քարվանատուն։ ԲԱԳՈՒԻ—եղբ. Վ. եւ Ի. Մուճաֆեեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկեանի, № 27։ ՆՕՎՕՐՕՍՍԻՅՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (ե. հ. չ.) 18—20

Կօնֆէկտի եւ չօկօլադի գործարան
„Փ. Ն. ՓՐԻԳՕՆԵԱՆ“
ԹԻՖԼԻՍՈՒՄ
Յայտնում է, որ իր գործարանում պատրաստվում են չաքարեղէնների ամէն տեսակ արտադրութիւններ, որոնք թէ իրանց յատկութեամբ, մաքրութեամբ եւ թէ մատչելի գներով մրցում են Ռուսաստանի առաջնակարգ գործարանների արտադրութիւնների հետ։
Պատրաստում ենք՝ կարամէլ մրգեղէնից (фруктовая карамель), կարամէլ լցված (съ начинкою), մարմէլադ (пастила), զէֆիր (зефиръ), դրաժէ (драже), քիրվա-չաքար (պաղ-չաքար, леденецъ), Գործարանում աշխատում են հմուտ վարպետներ՝ մայրաքաղաքից հրաւիրված յայտնի վարպետի հսկողութեան տակ։
Պատուէրները կատարվում են անմիջապէս եւ ճշդութեամբ։
Գրէյս-կուրանտը ուղարկվում է ցանկացողներին ձրի։
Պատուէրների համար դիմել՝ Тифлисъ, Нахаловка, Павловская улица, собственный домъ, № 12.
Թիֆլիսում մեր գործարանի արտադրութիւնները ծախվում են հետեւեալ մագազիններում—Գ. Բայեանդուրեանի, Գ. Ս. Տէր-Սիմոնեանի, Զ. Ի. Սուլթանեանի, Զ. Գ. Պօպովի, եղբ. Ս. Ի. Մ. Աբրահամովների, Հալջի-Ռախմանովի պարակային մագազինում, Գետրօի իտալական մագազինում եւ այլն։ Տելեֆօն № 362։
20—100

Дозволено цензурою, Тифлисъ, 7 Мая 1901 г.

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27